ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N2648 - Ա **14 ապրիլի 2009թ.**

ՄԱՐՇԱԼ ԽՈՒԴՅԱԿՈՎԻ ՓՈՂՈՑԻ 4-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ Հ.5 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԵՂԱՄ ՎԱՂԻՆԱԿԻ ՇԱՀԲԱԶՅԱՆԻ, ԱՐՄԱՆ ՎԱՂԻՆԱԿԻ ՇԱՀԲԱԶՅԱՆԻ, ԳԵՈՐԳԻ ՎԱՂԻՆԱԿԻ ՇԱՀԲԱԶՅԱՆԻ, ԱԻԴԱ ԱՇՈՏԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Գեղամ Վաղինակի Շահբազյանի (ծնված 13.08.1972թ.), Արման Վաղինակի Շահբազյանի (ծնված 09.07.1975թ.), Գեորգի Վաղինակի Շահբազյանի (ծնված 30.01.1974թ.), Աիդա Աշոտի Մելքոնյանի (ծնված 16.07.1953թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Մարշալ Խուդյակովի փողոցի 4-րդ նրբանցքի հ.5 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 748.51քմ, որից 690քմ մակերեսով հողամասը Գեղամ Վաղինակի Շահբազյանին, Արման Վաղինակի Շահբազյանին, Գեորգի Վաղինակի Շահբազյանին, Աիդա Աշոտի Մելքոնյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է: Օրինական հողամասին կից օգտագործվող 58.51քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1992 թվականը, 12.02.2009թ. ժառանգության իրավունքի վկայագիրը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ավան տարածքային ստորաբաժանման 16.02.2009թ. հ.264ա, Երևանի քաղաքապետարանի <<Հողի ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 07.04.2009թ. հ.20/2-Ե-199 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 30.03.2009թ. հ.20-Ել-2489 եզրակացությունը, համաձայն որի Մարշալ Խուդյակովի փողոցի 4-րդ նրբանցքի հ.5 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Մարշալ Խուդյակովի փողոցի 4-րդ նրբանցքի հ.5 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Գեղամ Վաղինակի Շահբազյանի, Արման Վաղինակի Շահբազյանի, Գեորգի Վաղինակի Շահբազյանի, Աիդա Աշոտի Մելքոնյանի հողօգտագործման

իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 690քմ մակերեսով հողամասին կից 58.51քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 58.51քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ավան տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Մարշալ Խուդյակովի 7-րդ փողոցի 4-րդ նրբանցքի հ.5 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Մարշալ Խուդյակովի փողոցի 4-րդ նրբանցքի հ.5 տուն>>։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ավան տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Գեղամ Վաղինակի Շահբազյանի, Արման Վաղինակի Շահբազյանի, Գեորգի Վաղինակի Շահբազյանի, Աիդա Աշոտի Մելքոնյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Ավան թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ